

01/10.1/4010-09

2009-06-18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ
ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Վիկտոր Դալլաքյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Ձանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ:

«Ձանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ՝

1. 1-ին հոդվածի՝

1) 1-ին կետի վերաբերյալ հայտնում ենք, որ «կյանքի, անվտանգության, առողջության, իրավունքների, ազատությունների, օրինական շահերի, պատվի, արժանապատվության, բարի համբավի և գույքի պաշտպանության» ապահովման հետ կապված՝ պետության պարտականությունները, անկախ մասնագիտական գործունեության իրականացումից, հստակ սահմանված են Հայաստանի Հանրապետության Մահմանադրությամբ, և սույն

օրենքի կարգավորման առարկան չեն: Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը չի տարանջատում լրագրողին մարդուց և նախատեսում է պետական պաշտպանություն մարդկանց համար ընդհանրապես:

Ինչ վերաբերում է նույն կետով սահմանվող իրավասու մարմինների կողմից լրագրողների օրինական գործունեությունն ապահովելու նպատակով միջոցառումներ ձեռնարկելու պահանջին, ապա հայտնում ենք, որ պետությունը չի կարող միջամտել ֆիզիկական և իրավաբանական անձանց և լրագրողների փոխհարաբերություններին: Ավելին, իրավասու պետական մարմինը չի կարող պարտադրել ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ նրանց կամքին հակառակ թույլատրել, որպեսզի լրագրողն իրականացնի իր գործունեությունը՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց անձնական կամ նրանց գործունեությանը վերաբերող բնագավառներում: Նշված դրույթն իր բնույթով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված մարդու իրավունքների կոպիտ խախտում է, նախատեսում է պետական միջամտություն տարբեր ֆիզիկական և իրավաբանական անձանց միջև:

Հաշվի առնելով նշվածը՝ գտնում ենք, որ նախագծի 1-ին հոդվածի 1-ին կետի դրույթներն անընդունելի են, և դրանք անհրաժեշտ է հանել:

2) 2-րդ կետում «զանգվածային լրատվության միջոցի» բառերն անհրաժեշտ է փոխարինել «լրատվության միջոցի» բառերով՝ նկատի ունենալով «Զանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջները: Բացի դրանից, նույն կետից անհրաժեշտ է հանել «և այլն» բառերը, և հստակ սահմանել «լրատվության միջոցի տարածում» հասկացությունը, քանի որ հակառակ դեպքում նշված դրույթը հստակ չէ և կարող է առաջացնել տարակարծություն:

2. 2-րդ հոդվածով նախատեսված՝

1) 4.1-ին հոդվածի՝

ա. 1-ին մասում «օրենսդրությամբ» բառն անհրաժեշտ է փոխարինել «օրենքով» բառով՝ նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 83.5-րդ հոդվածի պահանջները, որոնց համաձայն «բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով են սահմանվում՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքներն իրականացնելու և պաշտպանելու պայմանները և կարգը»:

Նույն դիտողությունը վերաբերում է 18-րդ կետին,

բ. 2-րդ կետն անհրաժեշտ է խմբագրել՝ նախատեսելով բացառություն «պետական և ծառայողական, անձնական և բանկային գաղտնիք պարունակող և մարդու անձնական կյանքին վերաբերող փաստաթղթերից», քանի որ հակառակ դեպքում նշված դրույթն ուղղակի հակասում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, «Բանկային գաղտնիքի մասին» և «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներին: Միաժամանակ նույն կետից անհրաժեշտ է հանել «ստանալ դրանք կամ դրանց պատճենները»: Բառերը, քանի որ լրագրողները չեն կարող ստանալ «պաշտոնական փաստաթղթերը», այլ կարող են միայն ծանոթանալ դրանց և անհրաժեշտության դեպքում կատարել դրանց պատճենահանում՝ իրենց միջոցների հաշվին,

գ. 3-րդ կետից անհրաժեշտ է հանել «հանցագործությունների, հատուկ պահպանության» բառերը, քանի որ հիշյալ վայրերը հատուկ ռեժիմի վայրեր են, և այդ վայրեր լրագրողը կարող է այցելել միայն հատուկ թույլտվության դեպքում:

Բացի դրանից, նշված՝

- վայրեր այցելելը կարող է նաև արգելվել՝ ելնելով «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներից: Այդ առումով նախագիծն անհրաժեշտ է լրացնել նոր հոդվածով՝ նախատեսելով «հանցագործությունների և հատուկ պահպանության վայրերի» այցելության առանձնահատկությունները.

- կետն անհրաժեշտ է խմբագրել «դատավարություններին մասնակցելու» մասով՝ նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության **19**-րդ հոդվածի պահանջները, որոնց համաձայն «Հանրության բարքերի, հասարակական կարգի, պետական անվտանգության, դատավարության մասնակիցների անձնական կյանքի կամ արդարադատության շահերի պաշտպանության նկատառումներով լրատվության միջոցների և հասարակության ներկայացուցիչների մասնակցությունը դատական քննության ընթացքում կամ դրա մի մասում կարող է արգելվել»,

ե. **9**-րդ կետն անհրաժեշտ է հանել, քանի որ լրագրողի ծածկանուն ունենալովերաբերյալ դրույթները սույն օրենքի կարգավորման առարկան չեն: Լրագրողի ծածկանուն ունենալու իրավունքը որևէ իրավական ակտով սահմանափակված չէ, և լրագրողը ազատ է իր համար ծածկանուն ընտրելու հարցում,

զ. **10**-րդ կետն անհրաժեշտ է խմբագրել՝ հստակեցնելով «ստուգել» հասկացության բովանդակությունը, հակառակ դեպքում ստացվում է, որ լրագրողին վերապահվում են պետական գործառույթներ, ինչն անընդունելի է,

է. **13**-րդ կետն անհրաժեշտ է խմբագրել, քանի որ մեր կարծիքով լրագրողը կետում նշված մարմիններ կարող է այցելել միայն նախօրոք պայմանավորվածության և համաձայնության դեպքում: Նույն դիտողությունը վերաբերում է նաև **15**-րդ կետին,

ը. **16**-րդ կետն անհրաժեշտ է հանել, քանի որ, ըստ էության, կրկնում է **2**-րդ կետի դրույթները.

2) 4.2-րդ հոդվածի **5**-րդ կետը «պետական գաղտնիքի հրապարակման» մասով անընդունելի ենք համարում, քանի որ «Բանկային գաղտնիքի մասին» և «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների համաձայն և ընդհանրապես գաղտնիք համարվող տեղեկատվությունը չի կարող հրապարակվել՝ անկախ ստացման աղբյուրից: Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի **169**-

րդ, 199-րդ, 299-րդ, 302-րդ և 306-րդ հոդվածներով ուղղակի պատասխանատվություն է նախատեսվում տարբեր ոլորտներում գաղտնիք համարվող տեղեկատվության հավաքման, տրամադրման, հրապարակման համար՝ անկախ դրանց ստացման աղբյուրից: Նշված կետը չի բխում Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 169-րդ, 199-րդ, 299-րդ, 302-րդ և 306-րդ հոդվածների պահանջներից և անընդունելի է: Միաժամանակ պարզ չէ, թե ինչպես լրագրողը կարող է օրենքով սահմանված կարգով ձեռք բերել գաղտնիք պարունակող տեղեկատվություն, եթե ներկայացված նախագծում ուղղակի նշված է, որ լրագրողը պարտավոր է չհրապարակել նման տեղեկատվություն, և որ «Բանկային գաղտնիքի մասին» ու «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների համաձայն լրագրողն իրավունք չունի ծանոթանալու գաղտնիք հանդիսացող տեղեկատվությանը: Բացի դրանից, պատասխանատվությանը վերաբերող հարցերը սույն օրենքի կարգավորման առարկան չեն:

Հաշվի առնելով նշվածը՝ նշված բոլոր դրույթներն անհրաժեշտ է հանել.

3) 4.3-րդ հոդվածն ամբողջությամբ անընդունելի ենք համարում, քանի որ դրանով նախատեսված «թաքնված գրառման» գործառույթները, «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, պետական լիազոր մարմնի հատուկ գործառույթներ են, որոնք իրականացվում են հատուկ թույլտվության դեպքում և չեն կարող իրականացվել լրագրողների կողմից:

Ներկայացված նախագծի դրույթները հակասում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին», «Բանկային գաղտնիքի մասին» ու «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների պահանջներին, պարունակում խմբագրման, հստակեցման և պարզաբանման կարիք ունեցող հասկացություններ և դրույթներ:

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ`

1. 1-ին հոդվածն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին, որոնց համաձայն «Օրենսգրքի լրիվ անվանումը հիշատակելիս դրանում հետևյալ հաջորդականությամբ ներառվում են «Հայաստանի Հանրապետության» բառերը, դրա ընդունման օրը և օրենսգրքի վերնագիրը»: Անհրաժեշտ է նկատի ունենալ նաև, որ օրենսգրքի լրիվ անվանումը հիշատակելիս` չի նշվում օրենսգրքի թիվը:

2. 1-ին հոդվածի`

1) 1-ին կետով կատարվող լրացման վերաբերյալ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 164-րդ հոդվածը վերնագրված է «Լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելը», և պատասխանատվություն է նախատեսում լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելու համար, այդ առումով, եթե`

ա. «զանգվածային լրատվության միջոցի տարածումը» լրագրողի օրինական գործունեությունն է, ապա նախատեսված լրացման անհրաժեշտությունը չկա, քանի որ այդ հարաբերությունները հստակ կարգավորված են նշված հոդվածով,

բ. «զանգվածային լրատվության միջոցի տարածումը» լրագրողի գործունեության տեսակ չէ, ապա նախատեսվող լրացումը չի կարող կատարվել նշված հոդվածում, քանի որ չի բխում հոդվածի կարգավորման առարկայից.

2) 2-րդ կետով կատարվող փոփոխությունը լուրջ հիմնավորման կարիք ունի: Գտնում ենք, որ տվյալ հանցագործության համար նախատեսվող պատասխանատվության չափն անհիմն բարձր է:

Նույն դիտողությունը վերաբերում է նաև նախագծի 1-ին հոդվածի 3-րդ կետին:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված տեսքով օրենքների նախագծերի փաթեթի ընդունմանը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Գևորգ Դանիելյանը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ

Պ-623-13.05.2009-ԳԿ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«Զանգածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում
փոփոխություն եւ լրացումներ կատարելու մասին**

Հոդված 1. «Զանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության 2003 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ ՀՕ-14-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 4-րդ հոդվածում.

1) 1-ին կետի 2-րդ պարբերությունը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝

«Լրագրողն իր մասնագիտական օրինական գործունեության իրականացման ընթացքում որպես հասարակական պարտք կատարող անձ գտնվում է պետության պաշտպանության ներքո, որը երաշխավորում է լրագրողի կյանքի, ավտանգության, առողջության, իրավունքների, ազատությունների, օրինական շահերի, պատվի, արժանապատվության, բարի համբավի եւ գույքի պաշտպանությունը»:

Սույն օրենքով սահմանված լրագրողի իրավունքների խախտման դեպքում լրագրողի դիմումի հիման վրա կամ սեփական նախաձեռնությամբ իրավասու պետական մարմինները ձեռնարկում են համապատասխան միջոցառումներ լրագրողի մասնագիտական օրինական գործունեությունը ապահովելու նպատակով:

2) 3-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6)-րդ ենթակետով «6) զանգվածային լրատվության միջոցի տարածմանը (բաժանորդագրություն, առաքում, իրացում եւ այլն) խոչընդոտելը»:

Հոդված 2. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1, 4.2, եւ 4.3 հոդվածներով՝

1) **Հոդված 4.1. Լրագրողի իրավունքները**

Լրագրողը օրենսդրությամբ սահմանված կարգով իրավունք ունի՝

1. փնտրել, հավաքել, ստանալ պատրաստել, խմբագրել եւ տարածել տեղեկատվություն,
2. ծանոթանալ պաշտոնական փաստաթղթերին եւ նյութերին, ստանալ դրանք կամ դրանց պատճենները,
3. իր մասնագիտական օրինական գործունեությունն իրականացնելիս լրագրողի վկայականով այցելել տարերրային եւ այլ աղետների, վթարների, հանցագործությունների, հատուկ պահպանության, արտակարգ իրավիճակ հայտարարված վայրեր, զնազվածային անկարգությունների ու քաղաքացիների զանգվածային կուտակումների հատուկ պահպանվող վայրեր, դատավարությունների, արգելանոցներ, ինչպես նաեւ ներկա գտնվել ժողովների, հանրահավաքների, երթերի, ցույցերի եւ այլ հավաքների,
4. կատարել զրառումներ՝ այդ թվում տեսագրության, ձայնագրության, պատճենահանման, լուսանկարման եւ նկարահանման միջոցների օգտագործմամբ,
5. պատճենահանել, կրկնօրինակել, հրատարակել, հրապարակել կամ այլ կերպ վերարտադրել փաստաթղթեր եւ նյութեր,
6. հրաժարվել իր ստորագրությամբ նյութ կամ հրապարակում պատրաստելուց, եթե այն չի համապատասխանում իր համոզմունքներին,

7. հրաժարվել խմբագրության կամ խմբագրի կողմից իրեն տված այն հանձնարարություններից, որոնց բնույթը կամ կատարումը կարող է առաջացնել օրենքի խախտում,

8. հրաժարվել իր գրած հոդվածը կամ պատրաստած նյութը հրապարակելուց, եթե դրանց բովանդակությունը, աղավաղված է խմբագրի (խմբագրակազմի, խմբագրական խորհրդի եւ այլն) կողմից,

9. ունենալ ծածկանուն,

10. ստուգել իրեն տրված տեղեկատվության հավաստիությունը,

11. շարադրել իր անձնական դատողությունները, գնահատականները, մեկնաբանությունները եւ նկատառումները այն նյութերում կամ հրապարակումներում, որոնք պետք է տարածվեն իր ստորագրությամբ,

12. իր գրած հոդվածը կամ պատրաստած նյութը հրապարակել (տարածել) սեփական ստորագրությամբ, կեղծանունով կամ առանց ստորագրության,

13. տեղեկատվություն ստանալու նպատակով այցելել պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններ, կուսակցություններ, կազմակերպություններ, հիմնարկներ կամ դրանց լրատվական ծառայություններ,

14. հարցազրույց վարել քաղաքացիների կամ պաշտոնատար անձանց հետ,

15. տեղեկատվություն ստանալու կապակցությամբ կամ իր հարցումներին համապատասխան ընդունելություն ստանալ պաշտոնատար անձանց կողմից,

16. ստանալ պետական, ծառայողական, առևտրային կամ օրենքով սահմանված այլ գաղտնիք չպարունակող փաստաթղթեր եւ նյութեր, դրանցից կատարել քաղվածքներ եւ պատճեններ,

17. լուսանկարել, նկարահանել, տեսագրել եւ ձայնագրել պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններում, կուսակցություններում, կազմակերպություններում, հիմնարկներում եւ հասարակական վայրերում,

18. իրականացնել օրենսդրությամբ սահմանված այլ լրագրություններ:

Զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների պահանջով պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինները, հիմնարկները, կազմակերպությունները, կուսակցությունները, կազմակերպությունները եւ դրանց պաշտոնատար անձիք պարտավոր են նրանց տրամադրել համապատասխան տեղեկատվություն բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի: Զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները կարող են տեղեկատվություն ստանալ նաեւ քաղաքացիներից:

2) Հոդված 4.2. Լրագրողի պարտականությունները

Լրագրողը իր մասնագիտական օրինական գործունեությունն իրականացնելիս պարտավոր է՝

1. հարգել այլոց իրավունքները, օրինական շահերը, պատիվը, արժանապատվությունն ու բարի համբավը, չհրապարակել (չտարածել) դրանք արատավորող լուրեր ու տեղեկություններ,
2. իրավասու մարմնի կամ անձի առաջին, իսկ պահանջի դեպքում ներկայացնել լրագրողի վկայականը կամ անձը եւ լրագրողի լիազորությունները հավաստող այլ փաստաթուղթ,
3. չհրապարակել պատերազմի, ռասիզմի, բռնության, ազգային եւ կրոնական թշնամանքի, թմրամոլության, մարմնավաճառության եւ քրեորեն հետապնդելի այլ արարքների քարոզչություն պարունակող նյութեր,
4. չհրապարակել կեղծ տեղեկատվություն, չաղավաղել քաղաքացիների կամ պաշտոնատար անձանց հետ վարած հարցազրույցների բովանդակությունը,
5. չհրապարակել պետական, ծառայողական, առևտրային կամ օրենքով սահմանված այլ բնույթի գաղտնիք համարվող տեղեկատվության՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդ տեղեկատվության արտահոսքի աղբյուրը համապատասխան պաշտոնատար անձն է: Այդ դեպքում պատասխանատվությունը կրում է ոչ թե լրագրողը այլ գաղտնիք պարունակող տեղեկատվությանն իրագել եւ դրանց պահպանության համար պատասխանատու անձիք: Լրագրողը պատասխանատվություն չի կրում, եթե գաղտնիք հանդիսացող տեղեկատվությունը նա ձեռք է բերել օրենքով սահմանված կարգով,
6. զանգվածային լրատվության միջոցի խմբագրին տեղեկացնել չստուգված փաստերի (տեղեկությունների) մասին, որոնց հրապարակումը (տարածումը) կարող է խախտել սույն օրենքի պահանջները,
7. տեղեկություններ հաղորդած անձանց պահանջով նշել այդ տեղեկության աղբյուրը եւ մեջբերման հեղինակին, կամ պահպանել տեղեկությունների եւ դրանց աղբյուրի գաղտնիությունը,
8. քաղաքացիներից կամ պաշտոնատար անձանցից տեղեկություններ ստանալիս նրանց նախապես զգուշացնել ձայնագրության, տեսագրության, լուսանկարման եւ նկարահանման մասին, բացառությամբ սույն օրենքի 4.3 հոդվածով նախատեսված դեպքերի:

3) Հոդված 4.3 Թաքնված գրառում

Տեղեկությունների եւ նյութերի ձեռքբերումը թաքնված ձայնագրության, տեսագրության, լուսանկարման եւ նկարահանման օգտագործմամբ թույլատրվում է եթե, առկա է հետեւյալ հանգամանքներից որեւիցե մեկը՝

- 1) դա չի խախտում մարդու եւ քաղաքացու սահմանադրական իրավունքներն ու ազատությունները,

2) եթե դա անհրաժեշտ է հասարակական շահերը պաշտպանելու համար եւ ձեռնարկված են համապատասխան միջոցներ կողմնակի անձանց հնարավոր նույնականացումը կանխելու համար,

3) եթե գրառման ցուցադրումը կատարվում է դատարանի որոշմամբ:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Նախագիծ
Պ-623'-13.05.2009-ԳԿ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում եւ փոփոխություններ կատարելու մասին

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության 2003թ. ապրիլի 18-ի ՀՕ-528-Ն քրեական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 164-րդ հոդվածում՝

1) 1-ին կետում «հարկադրելը» բառից հետո լրացնել «կամ զանգվածային լրատվության միջոցի տարածմանը որեւէ ձեւով խոչընդոտելը» բառերով:

2) 1-ին կետում «հիսնապատիկից հարյուրիսնապատիկի չափով» բառերը փոխարինել «չորսհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ ազատագրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով» բառերով:

3) 2-րդ կետի սանկցիան շարադրել հետեւյալ բովանդակությամբ՝

«պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի յոթհարյուրապատիկից ութհարյուրապատիկի չափով, կամ ազատագրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ

Սույն օրինագծերի փաթեթի ընդունումը պայմանավորված է լրագրողների իրավունքների, պարտականությունների եւ պաշտպանվածության հիմնահարցերը կանոնակարգելու անհրաժեշտությամբ: Օրինագիծը նախապատրաստելիս օգտագործվել են մի շարք երկրների՝ այդ թվում Ռուսաստանի Դաշնության, Լատվիայի եւ Վրաստանի համապատասխան օրենքների դրույթները:

Օրինագծի մշակմանը մասնակցել են Մամուլի ազգային ակումբի, «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ ներկայացուցիչները, ինչպես նաեւ իմ օգնականներ՝ Արմենուհի Սաղաթեյանը եւ Երվանդ Դալլաքյանը:

Օրնագծերի փաթեթը **2009** թվականի մարտի **26**-ին համապատասխան եզրակացություններ ստանալու նպատակով էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկվել է թվով **45** ԶԼՄ-ներ (ցանկը կցվում է), որոնցից առ **13.05.2009** թ. առաջարկություններ եւ դիտողություններ են ստացվել «Ազատամտություն» եւ «Հայք» թերթերից, ինչպես նաեւ «Հայաստային Հանրային Հեռուստաընկերություն» ՓԲԸ-ից: Դրանք հաշվի են առնվել օրինագծի մշակման ընթացքում:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՄՈՒՅՆ ՓԱԹԵԹԸ ԶՄԱՆԵՐԻՆ, ՆԵՐԿԱՅԱԳՆԵՂՈՒ ՈՍՄԻՆ,

ԹՆՐԹՐ

1. «168 ժամ»
2. «Առավոտ»
3. «Այսուգորդ»
4. «Ազատամտություն»
5. «Ազգ»
6. «Չորրորդ Իշխանություն»
7. «Գողոս Արմենիկ»
8. «Հայաստանի Հանրապետություն»
9. «Հայր»
10. «Հայկական Ժամանակ»
11. «Հայոց Աշխարհ»
12. «Հրապարակ»
13. «Իրավունք դե ֆակտո»
14. «Նովյե Կրեմլա»
15. «Փակագիծ»
16. «Տարեգիրք»
17. «Ժամանակ»
18. «Այլ Ֆե»
19. «Ինտելեկտիվ Արմենիա»
20. «Իրավունք»
21. «Նոյսն Տարսն»

8. ՀԱՅ TV
9. «ՀԱՅՐՆՆԻՔ»
10. «ԿԵՆՏՐՈՆ»
11. «Հ1»
12. «ԸԱՆԺ»
13. «ՇՈՒԱԿԱԺ»
14. «ԵՐԵՎԱՆ TV»
15. «ԵՐԿԻՐ ՄԵՐԻՈՒ»

ՈԱՂԻՈՇՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հանրային ռադիո
2. «Ազատություն» ռադիոկայան

ԼՐԱՏՎԱԿԱՆ

ԿՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «Նոյսն Տարսն»
2. «Մեդիաճառ»
3. «Արմինֆա»
4. «Արմենպրես»
5. «Արմենիա»
6. «Արկա»
7. «ԱՄ Նովոսոյի-Արմենիա»

ՀԵՄԱՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «ԱԼՍ ՀՈՒԿՆՆԵՐ» ՍՊԸ
2. «ԱԴ»
3. «ԱՐՄԵՆՀԱԿՈՔ»
4. «ԱՐՄԵՆԻԱ»
5. «Հ2»
6. «ԱՐՄՆՑՈՒՉ»
7. «ԴԱՐ-21»